Ավետիք Իսահակյան

Ծառիս վրա մի գորշ թռչուն

Եղբորս որդու՝
Իսահակ Իսահակյանի

I
Ծառիս վրա մի գորշ թռչուն՝
Կտուցն առած թևի տակ՝
Կուչ է եկել ու հառաչում,
Ա՞յնպես տխուր ու անհույս,
Ասես՝ առել բերել է ինձ
Վերջին խոսքը սիրելուս …

Ու լսում եմ խոսքը տրտում.
Սրտիցս արյուն է կաթում …

II
Միշտ երկեերկիր,
Ինձանից հեռու,
Թափառում էիր,
Երբ ողջ էիր դու:

Բայց մոտըս եկար
Քո մեռած օրեդ.
Հիմա անբաժան
Շրջում ես ինձ հետ:

III

Մաղում է անձրև՝
Սրտամա՛շ, տրտո՛ւմ.
Անձրև՛ ու անձրև՛,
Դանդա՛ղ անդադրո՛ւմ:

Ա՜խ, հիմի, հիմի
Ի՞նչ ցուրտ է ու թաց
Մութում քո շիրմի
Իմ սրտիս սիրա՛ծ …

Հոգուս մեջ դարձար
Դու մի այրող վերք.
Ես քեզ մոռանալ
Չեմ կարող երբե՛ք:

Ու աշնան մեգում
Կանգնել եմ անհույս,
Անհույս հեկեկում
Անունդդ անո՛ւշ …

IV

Աչքս ճամփիդ ծովացած՝
Կարոտդ սիրտս էր այրում.
Այցի եկար դու հանկարծ
Ինձ այս օտար աշխարհում;

Դեմքդ քնքուշ ժպիտով,
Ինչպես մանուկ երեկվա,
Գիրկս ընկար կարոտով,
Իմ անուշիկ երեխա՛ …

Այդ ինչքա՞ն ես մեծացել,
Պարթևական ինչ հասակ.

Ի՞նչ շքեղ ես, գեղեցիկ,
Գարնան կանաչ արեգակ …

Հաղթանակից ես եկել,
Ոսկեզրահ, քաջածի
Ա՞խ, քեզ շատ եմ կարոտել,
Մոտս կեցի՛, մի դարձի …

Սո՞ւտ է, հոգի՛ս, թե հիմի,
Մարմարե ձյունն է ծածկում
Հողաթումբը քո շիրմի, -
Դու իմ մոտս ես, իմ գրկում:

Ճակտիդ վրա, աստղի պես,
Պստի՛կ, պստի՛կ մի վերք կա …
Թո՛ղ համբուրեմ՝ լավանա,
Դու, իմ կտրիճ երեխա՛ …

1916
Ժընև